ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
**ԵՐՎԱՆԴԱՇԱՏԻ**
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
ОБЩИНА
**с. ЕРВАНДАШАТ**

գ.Երվանդաշատ N 109

<<06>> <<08>> 2018թ.

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ
Գ. ՄԻՐԻՋԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Կից ներկայացվում է Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքի ղեկավարի 25, 26, 27, 28, 29-րդ որոշումները, և 11, 12, 13-րդ կարգադրությունները:

Առդիր 9 թերթ:

ԵՐՎԱՆԴԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 11289/13265-18
07 08 2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԵՐՎԱՆԴԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# Ո ր ո շ ու մ թիվ 29

«31» 07 2018 թ. գ. Երվանդաշատ

Հիմք ընդունելով քաղաքացի Ռուդիկ Ժորայի Սահակյանի դիմումը Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքի Բերդակի 2 հասցեի իրեն սեփականության իրավունքով պատկանող տնամերձ հողամասի հատկացումից մինչև 20% ավել օգտագործվող 0.0146 հա հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու մասին դիմումը:

## Ո ր ո շ ու մ ե մ՝

1. Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքում գտնվող Ռուդիկ Ժորայի Սահակյանին պատկանող 013-008 ծածկագրի տնամերձ հողամասի հատկացումից մինչև 20% ավել օգտագործվող 0.0146 հա հողամասը ճանաչել նրա սեփականությունը:

2. Ավել օգտագործվող 0.0146 հա հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում

2. Հատկացումից ավել օգտագործվող հողամասը բավարարում է ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2 և 3 ենթակետերի պահանջներին:

3. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Հ. Ավետիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԵՐՎԱՆԴԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո ր ո շ ու մ թիվ 28

«31» 07 2018 թ. գ. Երվանդաշատ

Հիմք ընդունելով քաղաքացի Ռուդիկ Ժորայի Սահակյանի դիմումը Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքի Բերդակի 4 հասցեի իրեն սեփականության իրավունքով պատկանող տնամերձ հողամասի հատկացումից մինչև 20% ավել օգտագործվող 0.0055 հա հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու մասին դիմումը:

Ո ր ո շ ու մ ե մ՝

1. Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքում գտնվող Ռուդիկ Ժորայի Սահակյանին պատկանող 013-007 ծածկագրի տնամերձ հողամասի հատկացումից մինչև 20% ավել օգտագործվող 0.0055 հա հողամասը ճանաչել նրա սեփականությունը:

2. Ավել օգտագործվող 0.0055 հա հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում

2. Հատկացումից ավել օգտագործվող հողամասը բավարարում է ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2 և 3 ենթակետերի պահանջներին:

3. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Հ. Ավետիսյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԵՐՎԱՆԴԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ

# ՈՐՈՇՈՒՄ

31.07.2018թ. Թիվ 27-Ա

### ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՌՈՒԴԻԿ ՍԱՀԱԿՅԱՆԻ, ՄԱՆԻՇԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ, ԱՐՇԱԿ ՍԱՀԱԿՅԱՆԻ, ԱՆԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ, ՍԱՀԱԿ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի, Երվանդաշատ համայնքի բնակիչներ՝ Ռուդիկ ժորայի Սահակյան (ծնված 28.08.1960թ.), Մանիշակ Ալբերտի Գևորգյան (ծնված 18.01.1968թ.), Արշակ Ռուդիկի Սահակյան (ծնված 15.09.1986թ.), Անի Ռուդիկի Սահակյան (ծնված 04.02.1988թ.), Սահակ Ռուդիկի Սահակյան (ծնված 09.05.1990թ.) դիմել են Երվանդաշատ համայնքի Բերդակ փողոց 2 hասցեում գտնվող 013-008 կադաստրային ծածկագրով 2146ք.մ օրինական տնամերձ հողամասի վրա կառուցված բնակելի տունը և շենք շինությունները օրինականացնելու խնդրանքով, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 15.05.2001թ., և դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերին ու կանոններին էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Բավարարում են «ՀՀ համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1 և 2 հոդվածների պահանջները:

Հողամասը չի ընդգրկում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում: Հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետով սահմանված պահանջներին: Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով: Տեղական Ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ.

1. Վերականգնել Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքի Բերդակ փողոց, 2 տուն հասցեում գտնվող 2146 քմ. օրինական տնամերձ հողամասի վրա բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ քաղաքացիներ Ռուդիկ ժորայի Սահակյանի(ծնված 28.08.1960թ.), Մանիշակ Ալբերտի Գևորգյանի(ծնված 18.01.1968թ.), Արշակ Ռուդիկի Սահակյանի (ծնված 15.09.1986թ.), Անի Ռուդիկի Սահակյանի(ծնված 04.02.1988թ.), Սահակ Ռուդիկի Սահակյանի(ծնված 09.05.1990թ.) գույքային իրավունքը 2146քմ օրինական հողամասի վրա գտնվող

1. Բնակելի տուն 80,30քմ կառուցված 1989թ.

2. Յողամասի սահմանները որոշվում են Երվանդաշատի համայնքապետի

կողմից հաստատված հատակագծով:

Երվանդաշատի գյուղապետ / Յ. Ավետիսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՐՎԱՆԴԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ

## ՈՐՈՇՈՒՄ

Թիվ 26-Ա 31.07.2018թ.

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» հայաստանի Հարպատեության օրենքի 20-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարությա 2006թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8, 8.1, 10, 11-րդ կետերով, 13-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով, հիմք ընդունելով կառույցն իրականացրած անձ Ռուդիկ Սահակյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1.Արմավիր մարզի Երվանդաշատ գյուղի Բերդակ փողոց 4 հասցեում գտնվող՝ սեփականության իրավունքով Ռուդիկ Ժորայի Սահակնանին ծնվ. 28.08.1960թ, Մանիշակ Ալբերտի Գևորգյանին ծնվ. 18.01.1968թ. Արշակ Ռուդիկի Սահակյանին ծնվ. 15.09.1986թ. Անի Ռուդիկի Սահակյանին ծնվ. 04.02.1988թ. Սահակ Ռուդիկի Սահակյանին ծնվ 09.05.1990թ. պատկանող հողամասում ինքնակամ իրականացրած ընդհանուր 90,7 քմ մակերեսով կառույցը՝ անասնաշենք 73,5քմ, ծածկոց 17,2քմ ճանաչել օրինական:
2.Ընդունել ի գիտություն, որ
1)կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.
2)շինությունը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.
1)Սույն որոշման ընդունման օրվանից60-օրյա ժամկետում, Երվանդաշատ համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի մայիսի 18-ի հ. 912-Ն որոշմամբ հաշվարկված 23945 Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը
2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:
4.Սահմանել, որ
1)սույն որոշման ընդունման օրավանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած
2)սույն որոշումը ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԵՐՎԱՆԴԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ

# ՈՐՈՇՈՒՄ

Թիվ 25-Ա 31.07.2018թ.

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» հայաստանի Հարպատեուբյան օրենքի 20-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարությա 2006թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8, 8.1, 10, 11-րդ կետերով, 13-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով, հիմք ընդունելով կառույցն իրականացրած անձ Ռուդիկ Սահակյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1.Արմավիր մարզի Երվանդաշատ գյուղի Բերդակ փողոց տուն 2 հասցեում գտնվող՝ սեփականության իրավունքով Ռուդիկ Ժորայի Սահակնանին ծնվ. 28.08.1960թ, Մանիշակ Ալբերտի Գևորգյանին ծնվ. 18.01.1968թ, Արշակ Ռուդիկի Սահակյանին ծնվ. 15.09.1968թ, Անի Ռուդիկի Սահակյանին ծնվ.04.02.1988թ, Սահակ Ռուդիկի Սահակյանին ծնվ. 09.05.1990թ. պատկանող հողամասում ինքնակամ իրականացրած ընդհանուր 142,82 քմ մակերեսով կառույցը՝ բնակելի տունը 93,3քմ, մառան 19,8 քմ, ավտոտնակ 22,9քմ և պարիսպը 6,82քմ ճանաչել օրինական:

2.Ընդունել ի գիտություն, որ

1)կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2)շինությունը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)Սույն որոշման ընդունման օրվանից60-օրյա ժամկետում, Երվանդաշատ համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի մայիսի 18-ի հ. 912-Ն որոշմամբ հաշվարկված 54125 Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

4.Սահմանել, որ

1)սույն որոշման ընդունման օրավանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած

2)սույն որոշումը ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՐՎԱՆԴԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Երվանդաշատի գյուղապետի

Թիվ 13-Ա 30.07.2018թ.

## ՌՈՒԶԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159 հոդվածի առաջին կետով

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Գրադարանավարուհի Ռուզաննա Հակոբյանին հատկացնել ամենամյա հերթական արձակուրդ քսան աշխատանքային օր և հինգ լրացուցիչ աշխատանքային օր տևողությամբ ։

2. Արձակուրդի մեջ համարել 01.08.2018 թվականից մինչև 05.09.2018 թվականը:

3. Աշխատանքի մեջ համարել 05.09.2018թ -ից:

4.Ռուզաննա Հակոբյանի աշխատանքային պարտականությունների կատարումը դնել գլխ. մասնագետ Շահեն Մուրադյանի վրա:

5. Սույն կարգադրությունն ուժի մեջ համարել 01.08.2018թվականից:

Երվանդաշատի գյուղապետ Ռ. Ավետիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՐՎԱՆԴԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Երվանդաշատի գյուղապետի

Թիվ 12-Ա 30.07.2018թ.

## ԽՄԵԼԱՋՐԻ ՑԱՆՑԻ ՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.Երվանդաշատ համայնքի խմելաջրի ցանցը ենթարկել մանրէազերծման քլորացման եղանակով:

2. Սույն աշխատանքների կատարման իրականացումը հանձնարարել համայնքապետարանի աշխատակից, առաջատար մասնագետ Համլետ Ղազարյանին:

3.Աշխատանքի կատարման վերահսկումը հանձնարարել առողջության կենտրոնի տնօրեն Արթուր Գարունովին:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ համարել արձակման պահից:

Երվանդաշատի գյուղապետ Հ. Ավետիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՐՎԱՆԴԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Երվանդաշատի գյուղապետի

Թիվ 11-Ա 03.07.2018թ.

# ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրեն 41-րդ հոդվածով, համաձայն «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի արտակար իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանությա համակարգերի նախապատրաստման 2018թվականի հիմնական միջոցառումների պլան»-ի 7.1.2 կետ պահանջների, իմ ղեկավարությամբ՝ Երվանդաշատ համայնքում 2018թվականի հուլիսի 20-ին անցկացվելու է շտաբային ուսումնավարժություն «Ջրածածկման վտանգի դեպքում համայնքի բնակչության պաշտպանության կազմակերպումը» թեմայով:

Նշված ուսումնավարժությանը ժամանակին նախապատրաստվելու և արդյունավետ անցկացնելու նպատակով **կարգադրում եմ՝**

1. 2018թ. հուլիսի 20-ին Երվանդաշատ գյուղի համայնքապետարանում իմ ղեկավարությամբ անցկացվելու է շտաբային ուսումնավարժություն «Ջրածածկման վտանգի դեպքում համայնքի բնակչության պաշտպանության կազմակերպումը» թեմայով:
2. Շտաբային ուսումնավարժությանը ներգրավել համայնքի ղեկավար կազմին, տարահանման հանձնաժողովին, հետախուզական, փրկարարական, բժշկական կազմավորումների պետերին:
3. Ուսումնավարժության ղեկավարի տեղակալ նշանակել համայնքապետի օգնական Գ.Մարտիրոսյանին:
4. Ուսումնավարժության ղեկավարի տեղակալին՝ մինչև հուլիսի 17-ը մշակել և իմ հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերը և մինչև հուլիսի 18-ը զեկուցել ուսումնավարժությանը պատրաստ լինելու մասին:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ / / Հ.ԱՎԵՏԻՍՅԱՆ